ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ
ԱՆՁՆԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ք. Երևան *«----» ---------- 2025թ.*

Անձնական տվյալների պաշտպանության մասին սույն համաձայնագիրը (այսուհետ՝ Համաձայնագիր) կնքվում է «**ԲՐԱՅԹ ՏՈՒՐ**» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն)՝ ի դեմս տնօրեն Անի Տաճատի Սամսոնյանի և քաղաքացի ---------- *(անուն, ազգանուն)* միջև, որոնք միասին կազմում են «Կողմեր»: Կողմերը համաձայնության են գալիս առ այն, որ

1. ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Հաշվի առնելով, որ Ընկերությանը քաղաքացի ---------- *(անուն, ազգանուն)* զբոսաշրջային ծառայություններ մատուցելու շրջանակում հայտնի են դառնում վերջինիս վերաբերյալ մասնավոր, ֆինանսական և անձնական բնույթի տեղեկատվություն, ըստ այդմ Ընկերությունը կրում է պարտավորություն այդպիսի տվյալների գաղտնիության պահպանման և չհրապարակման համար:

1.2 Ընկերությունը ձեռնարկում է կազմակերպչական, իրավական և տեխնիկական միջոցներ քաղաքացու տվյալները պաշտպանելու և դրանց հնարավոր արտահոսքը կանխարգելելու նպատակով:

1.3 Քաղաքացու անձնական տվյալները մշակվում են օրինական և որոշակի նպատակներով և առանց քաղաքացու համաձայնության չեն կարող օգտագործվել այլ նպատակներով:

1.4 Ընկերությունը պարտավոր է անձնական տվյալները մշակել այն նվազագույն քանակով, որն անհրաժեշտ է օրինական նպատակներին հասնելու համար:

1.5 Համաձայնության հիման վրա մշակվող տվյալները պահպանվում են այն ժամկետով, որն օբյեկտիվորեն անհրաժեշտ է տվյալներ մշակելու նպատակներն իրականացնելու համար:

1.6 Ընկերության աշխատակիցները պարտավոր են պահպանել անձնական տվյալների գաղտնիությունը ինչպես անձնական տվյալները մշակելու հետ առնչվող ծառայողական կամ աշխատանքային կամ կամավոր աշխատանքի շրջանակներում օրենքով սահմանված պարտականությունները կատարելու ընթացքում, այնպես էլ դրա ավարտից հետո:

1.7 Առանց քաղաքացու համաձայնությամբ Ընկերությունը չի կարող անձնական տվյալները փոխանցել երրորդ անձանց կամ տրամադրել տվյալներից օգտվելու հնարավորություն:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒԹՅՈՒՆԸ

2.1 Ընկերությունը քաղաքացու անձնական տվյալների պաշտպանության համար կրում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված պատասխանատվություն: Քաղաքացին կարող է պահանջել վնասի փոխհատուցում ՀՀ օրենսդրությանը համապատասխան բոլոր միջոցներով:

3. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«ԲՐԱՅԹ ՏՈՒՐ» ՍՊԸ ՀՎՀՀ՝ 06964432 Իրավաբանական հասցե՝ Խորենացի փողոց 2/33 Վանաձոր 2001, Վանաձոր, Լոռի, ՀՀ Գործունեության հասցե՝ Բաղրամյան 18, Ք. Երևան, ՀՀ **Անի Սամսոնյան, Տնօրեն**	**ԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ** Անձնական տվյալներ
Ստորագրություն Կ.Տ.	Ստորագրություն